մէջ կը պարունակէր նաեւ սաստիկ սպառնալիք՝ զգուշանալու շրջագայած ուխտերը ձեռնադրութիւն ընելէ. իսկ եթէ ի սախպել անհրաժեշտ հարկին պէտք ըլլայ յօգուտ եկեղեցւոյ՝ քահանայի ձեռնադրութիւն ընել, ժողովրդոց և գտնուած եկեղեցականաց կողմէն հաստատուն խնդրագիր ընդունել նախ հանդերձ կնքովք և յետոյ ձեռնադրել: Եդեսիա գտնուած ժամանակ կ'առաջարկեն իւրեան որ զտիրացու Դաւիթն տէր Սարգիսեան ձեռնադրէ քահանայ: Գեր. Յակոբ եպիսկոպոսը որքան որ կը հըրաժարի, այսու ամենայնիւ թէ ժողովրդոց և թէ Եդեսիոյ պատրիարքական փոխանորդ Արժ. Եղիշէ վարդապետին սաստիկ թախանձանացը և դրութեանցը զիջանելով և քահանայի մեծ կարօտութիւն ունենալնին զգալով՝ կը ձեռնադրէ զտիրացու Դաւիթը ի Սեւերեկ, ուր խրկած էին զինքը հանդերձ ժողովրդովք եւ կրկին խնդրագրօք: Հոս բաւական կը համարիմք միայն անոնց տուած յայտարարութիւնը հրատարակել:

«Այս գրուած յայտագրոյս պատճառն այս է, որ սուրբ Երուսաղէմի Ամեն. Եսայի Սրբազան Պատրիարք Հօր արժանընտիր փոխանորդ տէր Յակոբ Սրբազան Արքեպիսկոպոս հայրը հոս այցելութեան հանդիպելով, մեք եւս շատ կարօտ ըլլալով քահանայի, առաջարկեցինք որ քահանայ մը ձեռնադրէ մեզ՝ մեր ընտրած տիրացուն. վասն որոյ հաղիւ բարեհաճեցաւ մեր խնդրանաց կատարմանը վիճակիս Առաջնորդ ոէ Հօր վաւերացեալ գրովը, և գիւղաքաղաքիս սահմանադրական բոլոր ժողովոյ խնդրագրով, միանգամայն բովանդակ ժողովրդեան արժանահայց աղերսանացը նայելով, տէր Սարգիսեան տիրացու Դաւիթ արժանաւոր և շնորհալից ընծայացուն քահանայ ձեռնադրեց մեզ, որ եւ ամենեւին մէկ դրամ չառաւ մեզմէ նուէր, այն սեպելով ի պատիւ Ս. Աթոռոյն Երուսաղէմի, և ի սէր համայն լութեան ազգիս: Այդ աղագաւ չափազանցօրէն գոհ և շնորհակալ ըլլալով՝ այս յայտագիրը իրեն տուինք Նորին Սրբազնութեան ազնիւ ու քաղցր բընաւորութիւնը զեկուցանելով ընթերցողաց յայտագրոյս. որ և մնամք Սեւերեկու գիւղաքաղաքիս բոլոր Լուսաւորչական ժողովրդովքս երախտապէտ և բարեմաղթու Ս. Աթոռոյն Երուսաղէմի պայծառութե, և որբոց միաբանութեան բարելաւութեան: (Ստորագրութիւնք):

1866 Սեպտ. 26. ի Սեւերեկ.

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Մայիս ամսոյ 15/27 էր որ սուրբ քաղաքիս արքունի զօրաց միւլազիմ Ալի աղան տեղւոյս Մէքսիքայի հիւպատոսարանի պատուոյն նախատինք բերած էր անոր ղավազին հետ չարաչար վարուելովը: Ու թէպէտ անմիջապէս հատուցում մը խնդրուեցաւ քաղաքիս Վսեմ. փաշայէն, և յաճախ բանակցութիւններ եղան փաշային և ընդհ. հիւպատոսին մէջ տեղը, սակայն գոհացուցիչ վախճան մը չունեցաւ: Վասն որոյ հարկ եղաւ գործքը ի Կոստանդնուպօլիս ծանուցանել ընդդէմ կամաց ընդհ. հիւպատոսին, որ կ'ուզէր հոս լմննայ. բայց Ալի աղային՝ Ի. Դրան հրամանաւը այն օրերը զօրաց հետ մեկնել մեկնիլը վրայ գալով, ընդհ. հիւպատոսը պարտաւորեցաւ եղած անցքը

digitised by A.R.A.R.@

հանդերձ բանակցութեան յայտադրելով իւր դեսպանին հաղորդել: Ջան խորհրդակցութիւն մը ըլլալով արտաքին գործոց պաշտօնէից բարձրապատիւ Ալի փաշային և Մեքսիկայի Վսեմ. դեսպանին մէջ, հրաման եղաւ տեղւոյս կառավարչին՝ որ սիրով կարգի դնէ գործքը ընդհ. հիւպատոսին հետ: Նոյեմբեր 13/25 ին էր կատարեալ հատուցում մը տրուեցաւ հետեւեալ կերպով: Կիրակի կէս օրէն յետոյ Երուսաղէմայ բոլոր հիւպատոսները իրենց համազգեստովը Մեքսիկայի հիւպատոսարանի մեծ դահլճին մէջ ժողովեցան, և քանի մի րոպէէն յետոյ Վսեմ. կառավարիչն և զօրաց հրամանատար Լիվա փաշային իրենց մեծ համազգեստը հագած բազմութեամբ եկան հոն: Վսեմ. Լիվա փաշայն ատենաբանութեամբ մի յայտնեց անպատեհ անցքին վերայ զգացած ցաւը, նոյնը կրկնեց նաեւ կառավարիչ փաշայն. որոնց պատասխանելով Արժ. ընդհ. հիւպատոսը և ընդունելով անոնց ցոյց տըւած ցաւը՝ իւր ուրախութիւնը յայտնեց. և այսպէս բարեկամաբար կըրկին հաստատուեցաւ երկու տէրութեանց մէջ սիրոյ յարաբերութիւնները: Յետ որոյ ի նշան ճշմարիտ ուրախութեան բաժակներ ներկայացուեցան երկու կողմէն ալ: Նոյն միջոցին թէ բերդին և թէ ձմերանոցին վերայ Օսմանեան դրօշակը քաշուած էր:

Երկու օրէն յետոյ Մեքսիկայի տէրութեան կողմէն հասաւ Կուատալուբայի կարգին շքանշանը առ Վսեմ. կառավարիչ Իզզէթ փաշային: Արժ. ընդհ. հիւպատոսը ինքը անձամբ և հանդէսով մի տարաւ պալատը, ուր երկու կարգ զօրք պատրաստ կեցած էին, ողջունելու զհիւպատոսը, և ինքը Վսեմ. փաշային երկրորդ դատիկոնը իջնելով հոն ընդունեց իւր արժանաւոր նշանը: Այն արարողութեանց ներկայ էր նաեւ քաղաքիս Ռուսիոյ հիւպատոսարանի քարտուղար մեծապատիւ Փասքալ Յակոբ աղային, թարգմանութեան պաշտօնով: Նորին վսեմութիւնը զարմանալի համադիպութեամբ մի, նոյն օրը և երկու ժամ յետոյ Օսմանեան Վեհափառ Կայսեր կողմէն եւս Օսմանիէի առաջին կարգի նշանն ընդունեց:

Nello scorso mese di Maggio era stato accaduto un fatto, che aveva tacciato l'onore del Consolato generale Messicano in questa città. L'autore di questo era l'ajutante maggiore Ali aga, che aveva pubblicamente percosso il Cavas del detto Consolato, ed aveva profferito delle porole poco decent contro il detto Consolato.

Quantunque la questione era stata portata a conoscenza dell' autorità locale, ma questa, per motivo che l'offensore Ali aga doveva partire in quei giorni da qui per accompagnare il bataglione chiamato per altra destinazione, non pote investigar il fatto, e quindi la questione era stata riferita alla S. Porta.

S. Altezza Ali Pascia d'accordo con Ministro Messicano in Constantinopoli, rimandò l'affare a questa parte, incaricando S. E. Izset Pascia di esaminare il fatto, e riparare l'offesa secondo il grado della medesima. S. E. Izset Pascia, dopo aver ben esaminata la questione, è trovato Ali aga colpevole, ha stabilito d'accordo col Sr.[e] Pedro de Haro, Console generale Messicano in questa città, che S. E. Liva Pascia si recherebbe in uniforme al Consolato Messicano per riparare l'offesa. Infatti, il giorno domenica, 13/25 del mese di novembre, una completa soddisfazione ebbe luogo. Liva Pascia in gran uniforme, accompagnato di S. E. Izset Pascia, si recò al Consolato Messicano, ove trovavasi radunato il corpo Consolare in uniforme; dopo aver tenuto un discorso su questo proposito, esternò il suo dispiacere di ciò che era accaduto, e chiese scuse al Console generale. Questo rispose con un discorso, in cui si congratulava pel ristabilimento delle relazioni amichevoli fra lui e l'autorità locale. In questa occasione furono cambiato dei touast da una e dall' altra parte. Il paviglione ottomano sventolava in quel giorno sulla caserma militare.

Dopo due giorni, ciò è, al 15/27, venne rimesso a

digitised by A.R.A.R.@

S. E. Izset Pascia la commenda dell' Imp. ordine di Guadalupa, conferitagli da S. M. l'Imperatore Messicano. La solita ed usuale ceremonia venne praticata in questa circostanza. Nello stesso giorno S. E. Izset Pascia ricevette anche la commenda dell' augusto ordine Osmanie conferitagli graziosamente da S. M. l'Augustissimo nostro Sultano.

— Սուրբ Յարութեան տաճարի նորոգութեանը համար տասն հոգւոյ չափ գաղղիացի գործաւորներ հասան ի սուրբ քաղաքս. նմանապէս հարկաւոր եղած գործիքներն ու նիւթերը գալու վերայ են, և կը յուսացուի որ քիչ օրէն կը սկսին. Ռուսաց տէրութեան կողմէն որքան որ դեռ ճարտարապետ եկած չէ, բայց կը յուսացուի որ իրենց նորաշէն վանքի ճարտարապետին յանձնուի, որ քանի օրէն ի վեր է հոս կը գտնուի։

— Տեղւոյս կառավարիչ Վսեմ. Իզզէթ փաշայն մօտերս Պէրութ մեկնեցաւ, ի տեսութիւն Հալէպու Վսեմ. միւշիւր փաշային, որ նոյնպէս ի Պէրութ եկած է։

### ՀԱՐՑՄՈՒՆՔ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆՔ

(Տես թիւ 11. երես 147)։

ԺԵ. Հարցման լծ. էր հայն ինոււին 24 հազար եայր։ ԺԸ. լինի տասնեկան 21։ Ի. եղե ընդ ամենայն երեն 2160։ ԻԱ. լծալ էր ընդ ամենայն գերին 2240։ ԻԲ. Ա. ա, ե, ժ, ծէ։ Բ. գ, ժ, խ, ձը։ Գ. ե, գ, ժե, խդ, կ, կդ։ Դ. է, ե, ի, խդ։ Ե. թ, ժա։ Զ. ժ, ե, ժ, իբ, լ, լդ։ Է. ժբ, ժ, իբ, լ, լդ, ծե։ Ը. ժդ, գժ, ժէ, իբ։ Թ. ժղ, ե, ժ, իբ, ծե։ Ժ. ժը, ժբ, իբ, լդ, խդ։ ԻԳ. լծալ էր յշխեմարանին գարեհատ 8294. և լծալ են վոնուն կէրողէ գարոյն 103։ ԻԴ. ղոգախոնեալ ագոգայն ըոն ղաողանն ի դ, ղ, ժղ, ժը, ման ծամոն (1)։

(1) Լուծմանց մէջ եղած թուաբանական սխալները զանց կ'ընենք նշանակել։

### ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՔ

Մ՛իտք բորբոքեալ կրիւք՝ գրոհին առ ամենայն վիշտ վտանգի խնդամիտ և անյողդողդ։

Ոչ որք ի խոհեմաց պատժէ զի եղեն, այլ զի մի այլ եւս լիցին։

Քաջք յաղթեն մարդկան, այլ առաքինիք բախտի։

Չէ բաւական առն գահակալի՝ թէ իւր անձնական գնացք լիցին ջինջ և մաքուր յամենայն արատոյ։ Համար ունի տալ և վասն պակասութեանց և անիրաւութեանց ընդ ձեռամբ իւրով եղելոց։

Կիրք կորուսանեն զմարդիկ, եւ կամելով վնասել ոսոխի, յիւրեանց վերայ շրջեն զվնասն։

Բազումք անարժանութեամբ իւրեանց անարգութիւն են պաշտամանն՝ զոր ունին։

Յանդգունք ի խորհրդեան՝ վատասիրտք լինին ի գործադրութեան։

Այր դատարկակեաց փետրալից բարձ է սատանայի։

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

### ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

Ժամագիրք խորհրդագիր։ Մինչեւ հիմայ տպուած ժամագիրքերուն մէջ ուշադրութիւն չըլլալով՝ շատ սխալներ սպրդած էին խազերուն մէջ։ Վասն որոյ ներկայ տպագրութեանը յատուկ հոգ տարուելով՝ ազգային եկեղեցական նշանաւոր երաժշտի մի ձեռօք սխալները ուղղուեցան։ Գինը 25—30 ղուրուշ է, կազմին համեմատ։

ՀՐԱՄԱՅԵՑԱՔ ՏՊԱԳՐԵԼ
ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

digitised by A.R.A.R.@